



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶ ԶՈՐԱԳԵՏԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,  
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09  
Էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am  
N Ե- 01/134

« 28 » դեկտեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ  
Պ-ն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
30-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի  
ավագանու 2016թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 30-Ա, 31-Ն և 32-Ա որոշումները:

Առդիր 25 թերթ

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Ձորագետ համայնք, հասցե՝ հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09  
Էլ փոստ՝ dzoraget.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«93» դեկտեմբերի 2016 թվականի N 30-Ա

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 23-ի նիստի օրակարգը:

### Օրակարգ

Ձորագետ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 13-ի նիստի:

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրի ղեկավարումը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի սեփականություն հանդիսացող գույքը նվիրատվությամբ օտարելու համաձայնություն տալու մասին:

Կողմ ( 5 )

Դեմ ( 0 )

Ձեռնպահ ( 0 )

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ *Grigoryan*  
 ԻՄՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ *Imranyan*  
 ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ *Shermanyan*  
 ՍԱԹԻԿ ԶԱՆԻՆՅԱՆ *Zanyan*  
 ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ *Kocharyan*

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 13  
հ. Ձորագետ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09  
Էլ փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» Դեկտեմբերի 2016 թվականի N 31-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 32-րդ հոդվածի 2-րդ կետերով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի

2017-2021թվականների հնգամյա զարգացման ծրագիրը:

Կողմ ( 5 )

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ	<i>Գևորգ</i>
ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ	<i>Վահ</i>
ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ	<i>Վահ</i>
ՍԱԹԻԿ ԶԱՆԻՆՅԱՆ	<i>Վահ</i>
ՆԱՐԻՆԵ ՔՈԶԱՐՅԱՆ	<i>Վահ</i>

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 13  
հ. Ձորագետ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Ձորագետ համայնք, հասցե՝ հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09  
Էլ. փոստ՝ dzoraget.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Զ3» Դեկտեմբերի 2016 թվականի N 32-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅԸԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թվականի ապրիլի 28-նիստի N 16 արձանագրային որոշման՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

- 1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի սեփականություն հանդիսացող՝ ջրամբարը, նվիրատվությամբ օտարել «Լոռի- ջրմուղկոյուղի»ՓԲԸ-ին :
2. Կնքել գույքի նվիրատվության պայմանագիր,որը ենքակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ ( 5 )

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ *[Signature]*  
 ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ *[Signature]*  
 ՍԱԹԻԿ ԶԱՆԻՆՅԱՆ *[Signature]*  
 ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ *[Signature]*  
 ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ *[Signature]*



ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
2016 թ. դեկտեմբերի 23

ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

հ. Ձորագետ



## Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը-----	5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրեր .....	8
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները .....	8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	9
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն .....	12
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում..	14
3.1. Համայնքի զարգացման տեսլական .....	14
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ .....	15
4. ՀՀԶԾ ֆինանսավորում.....	16
5. ՀՀԶԾ մոնիթորինգ.....	17

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Ձորագետ համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական պրոբլեմներն են՝ Համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում:

ա/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը և համայնքի ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:



## 2 . Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ձորագետ համայնքը գտնվում է մարզկենտրոնից 30 կմ դեպի **հյուսիս-արևմուտք**: Համայնքի տարածքը կազմում է 213.07 հեկտար: Համայնքը գտնվում է Վանաձոր-Ալավերդի միջպետական ճանապարհի վրա: Համայնքով անցնում է միջպետական նշանակության երկաթուղին:

Աշխարհագրական դիրքը լեռնային է: Այն ծովի մակերևույթից գտնվում է 870 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է՝ ամռանը զով է, իսկ ձմռանը ոչ ցրտաշունչ:

Գյուղը բաղկացած է 2 բնակավայրից, մեկը մյուսից գտնվում է 2 կմ հեռավորության վրա: մի բնակավայրով հասում է Փամբակ գետը, իսկ մյուս բնակավայրով՝ Ձորագետ գետը, որի վրա էլ կառուցված է <<ՁՈՐԱԳԵՏԻ>> ՀԷԿ-Ը:

Համայնքի ներսում այդ երկու գետերը հատվում են, որտեղից էլ սկիզբ է առնում Դեբեդ գետը:

**Համայնքի** բնակչության **50%-ը** գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ նրանք բավարարված չեն աշխատանքով, և չունեն գյուղատնտեսական հող:

Համայնքի բնակչության առկա թիվը՝ 274 այդ թվում՝

0-1 տարեկան – 2

1-6 տարեկան-15

6-17 տարեկան-28

17-25 տարեկան – 29

25-42 տարեկան- 78

42-62 տարեկան- 73

63 և ավելի –49

Բնակչության սոցիալական կազմը՝  
այդ թվում՝

թոշակառուներ –57

միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներ – 0

հայրենական պատերազմի մասնակիցներ- 0

հաշմանդամներ – 7

որից՝

0-5 տարեկան – 0

6-17 տարեկան -1

աշխատանք ունեցողներ – 82

գործազուրկներ – 96

ընտանիքների (ծխերի) թիվը-97

փախստականներ-0

## 2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 4978,4 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 1478.4 մլն դրամ( 29.7%),
- Ստորև բերված են համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների եկամուտները՝

Ձեռնարկություններ	Քանակը	Եկամուտներ,դրամ.
Ձորագետ հիդրո	1	1840000000

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Արտադրանքի քանակը
միս	5.3տ
բուրդ	12.6կգ
ձու	22240հատ
մեղր	1020կգ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	12
Այդ թվում կովեր	6
Մանր եղջերավոր անասուններ	16
Այդ թվում մայրեր	16
խոզեր	20
Այդ թվում մայրեր	1
թռչուններ	152

Այդ թվում հավեր	139
մեղվարնտանիքներ	204

- Համայնքում գործում է հիմնական դպրոց, որտեղ սովորում են 21 աշակերտ: Դպրոցն ունի 14 աշխատող:
- Համայնքը ունի 1 բուժ աշխատող սակայն չունի բուժ կետ:
- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 13 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 31%:

### 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

- Համայնքում վերջին տարիներին իրականացված կամ ներկա պահին իրականացվող ծրագրեր չկան:

### 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	4859.2	4869.7	4875.4	5089.7	5209.3
Ա	Հարկային եկամուտներ	1149.5	1160,0	1165.7	1380.0	1499.6
1	Հողի հարկ	60.8	60.8	60.8	60.8	60.8
2	Գույքահարկ	659.2	669.7	675.4	689.7	698.3
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	414.0	414.0	414,0	614,0	725,0
Գ	Ոչ հարկային					

	Եկամուտներ					
1	Վարձավճարներ	15.5	15.5	15.5	15.5	15.5
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	3709,7	3709,7	3709,7	3709,7	3709,7
Ե	Եկամուտներ կապիտալ գործառույթյուններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

## 2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Ձորագետ համայնքի առջև ծառայած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 31%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

. ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,

. բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,

. ֆինանսի բացակայությունը

. Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝

. Ֆինանսական սղություն Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

. գործազրկությունը,

. համայնքի բնակավայրի գազաֆիկացման բացակայությունը

2) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ . համայնքաբնակների աղքատությունը,

3) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

- .խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,
- .միջոցների սղությունը,
- .փողոցային լուսավորության բացակայությունը:

4) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

- . ներհամայնքային ճանապարհների քայքայված վիճակը,

5) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

- .քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,
- .սեյսմիկ գոտում գտնվելը,
- .աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,
- .համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

6) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .հողաբաժնի պակասը,
- . Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝
- .հեղեղատարների բացակայությունը,
- .աղբահեռացում չկազմակերպելը,

7) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

- .գործարար միջավայրի բացակայությունը,
- .ձեռնարկությունների բացակայությունը,
- .երիտասարդների միգրացիան,

8) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .երիտասարդների չամուսնանալը,
- .երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,
- .պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

9) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

- .բնակչության իրազեկվածության պակասը, բուժ-գործիքների պակասը, նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը, անվճար բուժ սպասարկման քիչ լինելը, ջեռուցման բացակայությունը

10) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

11) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝

- .հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,
- .ինտերնետ կապի անորակությունը,
- .տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,

12) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ

հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .համայնքի երիտասարդների կամավորության պակասը,
- .հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,
- .տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ**  
 Համայնքի բնակիչները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

- ա/ Բնակիչը համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,
- բ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:
- դ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

**2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն**

<i>Համայնքի ուժեղ կողմեր</i>	<i>Համայնքի թույլ կողմեր</i>
<p>.Համայնքի աշխարագրական դիրքը</p> <ul style="list-style-type: none"> <li>. Անտառներ</li> <li>. Գետեր</li> <li>. Արդյունաբերություն</li> <li>. Քարի հանք</li> <li>. Հյուրանոցային համալիր առկայություն</li> <li>. հիմնականդպրոցի առկայություն.</li> </ul> <p>.Գազաֆիկացման առկայություն</p> <p>.Զբոսաշրջային հետաքրքրություն</p>	<p>.Խմելու ջրի ներհամայքային ցանցի անմխիթար վիճակ</p> <p>* Համայնքների փողոցների, ճանապարհների, մշակույթի շենքի անմխիթար վիճակը: *</p> <p>Նյութատեխնիկական բազայի պակաս:</p> <p>Ծնելիության նվազում կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ:</p> <p>Բնակչության սոցիալ- տնտեսական վատթար վիճակը:</p>



<p>ներկայացնող հնություններ          .Ողղակի ընտրությամբ ղեկավար          ընտրելու հնարավորություն</p>	<p>* Գյուղատնտեսական հողերի          բացակայում:          * Սելավատարների անմխիթար          վիճակը:          .Սոցիալապես ծանր վիճակում          գտնվող ընտանիքներ          .Ֆինանսական ռեսուրսների          բացակայություն          Արտագնա աշխատանքի          մեկնողների թվի աճ          ..Ներհամայնքային          ճանապարհների անբարեկարգ          վիճակ          Աշխատատեղերի պակաս          .Վթարային շենքերի          առկայություն</p>
<p><i>Հնարավորություններ</i></p>	<p><i>Սպառնալիքներ</i></p>
<p>.Խմելու ջրի պաշարի          առկայություն          .Քարի հանքի առկայություն          .Տուրիստական հետաքրքրություն          ներկայացնող վայրեր</p>	<p>.Տարերային աղետների վտանգ          Իրավաբանական անձանց կողմից          գութահարկի և հողի հարկի ցածր          գնահատված կադաստրային          արժեքները:          . Անկատարար օրենսդրություն:          . Գնացքների բացակայություն:</p>

### 3 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

#### 3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 3%-ով աճի:

### **3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ**

- 1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
- 2) Համայնքի գույքը կառավարել:
- 3) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
- 4) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
- 5) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
- 6) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
- 7) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,
- 8) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
- 9) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- 10) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- 11) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:

- 12) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- 13) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- 14) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- 15) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
- 16) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
- 17) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
- 18) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

#### **4 ՀՁԾ ֆինանսավորում**

ՀՁԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

## **5 ՀԶԾ մոնիթորինգ**

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

## Ծ Ր Ա Վ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Վ Ի Ր N 1

### «ՊՕԾՕ1402Ս21 2Ս 02Ս1 2ä21 à00 01 èà02Ս0ՍՕՃÆ 1 0ժ20à00»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գերեզմանատան ցանկապատման և սողանքների վերացման դեպքում կլուծվի գերեզմանատան պահպանման հարցը:						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		3.0մլն.դր.	3.0մլն.դր	-	-	-	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		3.0մլն.դր.	3.0մլն.դր	-	-	-	-
	2.	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
					-	-	-
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. պատնեշի կառուցում 1.2.  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.0 Կապիտալ ծախսեր՝ 3.0մլն. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3.0մլն. դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցների առկայություն 2.Աշխատանքների կատարման պատրաստակամություն 3.Քարի, ավազի և ցեմենտի որոշակի քանակի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների հայթայթում						
Ծրագրի հիմնական շահառուները	Ծրագրի հիմնական շահառու է համարվում ողջ համայնքը:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2017թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գերեզմանատունը չունի ցանկապատ որի հետևանքով ընտանի կենդանիները մուտք են գործում գերզմանատուն ,գերեզմանատան պահպանման համար անհրաժեշտ է կատարել, պատնեշի կառուցման աշխատանքներ 720գծմ երկարությամբ, բարձրություն 120սմ, լայնությունը100 սմ: Ծրագրի ֆինանսավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, հնարավոր չէ իրականացնել կամ կատարել համայնքի բյուջեի միջոցների հաշվին, նախատեսվում է ֆինանսավորման համար դիմել կառավարությանը, կամ դիմել դոնոր կազմակերպություններին և բարեգործներին: Համայնքի կողմից ներդրումը կիրանակացվի բնակիչների ուժերով:						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Ւ Մ

### « ՍՕԾԾԶԹԶՍՍԾՆԱԲՍ ՕՉՍԶձԶԾԾՍՕԾՔ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքային ճանապարհի պահպանություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Բարեկարգ ճանապարհ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		12.0մլն.դր	-	12.0մլն. դր	12.0 մլն. դր	12.0 մլն. դր	12.0 մլն. դր
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		12.0մլն.դր	-	12.0մլն. դր	12.0 մլն. դր	12.0 մլն. դր	12.0 մլն. դր
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		12.0մլն.դր	-	12.0մլն. դր	12.0 մլն. դր	12.0 մլն. դր	12.0 մլն. դր
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. նախագծի պատվիրում 1.2. ֆինանսական միջոցների հայթայթում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. անհրաճեշտ նյութերի ձեռքբերում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.0 Կապիտալ ծախսեր՝ 12.0 մլն. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 12.0 մլն. դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցների առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների հայթայթում և բնական աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն, համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի մոտ 3կմ ճանապարհի հատվածը գտնվում է անմխիթար վիճակում, դժվարանցանելի է բնակիչների և տրանսպորտային միջոցների համար: Ծանապարհը բարեկարգելու համար նախատեսվում է փոսալցման, հարթեցման և ասվալտապատման աշխատանքներ: Ծրագրի ֆինանսավորման համար անրաժեշտ ֆինանսական միջոցները, հնարավոր չէ իրականացնել կամ կատարել համայնքի բյուջեի միջոցների հաշվին, նախատեսվում է ֆինանսավորման համար դիմել կառավարությանը, կամ դիմել դոնոր կազմակերպություններին և բարեգործներին: Համայնքի կողմից ներդրումը կիրանակացվի բնակիչների ուժերով: Ծրագրի իրականացման արդյունքում ձորագետ համայնքը կունենա զեղեցիկ բարեկարգված ներհամայնքային ճանապարհ:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 3**  
**« Փ Ո Ղ Ո Ց Ա Յ Ի Ն Լ ՈՒ Ս Ա Կ Ո Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակավայրի կառուցապատումը և բարեկարգումը						
Ծրագրի անմիջական նպատակ	Ունենալ լուսավոր և գեղեցիկ համայնք						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		9.2 մլն. դր	-	-	9.2մլն. դր.	9.2մլն. դր.	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		9.2 մլն. դր	-	-	9.2մլն. դր.	9.2մլն. դր.	-
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		9.2 մլն. դր	-	-	9.2մլն. դր.	9.2մլն. դր.	-
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Լուսամուտիների ձեռք բերում</p> <p>1.2. հաղորդակարների ձեռք բերում</p> <p>1.3 հենասյունների ձեռք բերում</p> <p>1.4 փողոցային լուսամուտիների տեղադրում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1.</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 9.2 մլն. դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 9.2 մլն. դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	<p>1.Ֆինանսական միջոցների առկայություն</p> <p>2. Աշխատանքների կատարման պատրաստակամություն</p> <p>3. Հենասյունների որոշակի քանակի առկայություն</p>						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների հայթայթումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն, համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2020թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Ձորագետ համայնքը բաղկացած է երկու բնակավայրից, մեկը մյուսից գտնվում է 2կմ հեռավորության վրա,բնակավայրը որտեղ գտնվում է Թուֆենկյան հյուրանոցը, հյուրանոցի միջոցների հաշվին կատարվել է գիշերային լուսավորություն, իսկ մյուս համայնքը գուրկ է գիշերային լուսավորությունից: Ծրագրի իրականացման արդյունքում Ձորագետ համայնքում սախատեսվում է բոլոր փողոցների լուսավորության ապահովում և ունենալ լուսավորված և գեղեցիկ համայնք:</p> <p>Ծրագրի ֆինանսավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, հնարավոր չէ իրականացնել կամ կատարել համայնքի բյուջեի միջոցների հաշվին, նախատեսվում է ֆինանսավորման համար դիմել կառավարությանը, կամ դիմել դոնոր կազմակերպություններին և բարեգործներին: Համայնքի կողմից ներդրումը կիրանակացվի բնակիչների ուժերով:</p>						



**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 4**  
**« ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ »**  
 (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	<b>Ակտիվ մշակութային կյանքի կազմակերպում</b>						
Ծրագրի անմիջական նպատակ	Հարմարավետ և ժամանակակից մշակույթի կենտրոն ունենալ						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Վերանորոգված շենք	0	0	0	0	1	0	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Շենքի վերանորոգման նախագիծ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	ձեռք բերված Նախագիծ		0	0	0	1	0
	2. Վերանորոգված շենք						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Շենքի վերանորոգում	0	0	0	0	1	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 նախագծի պատվիրում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 անհրաժեշտ նյութերի ձեռք բերում 2.2 շենքի վերանորոգում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 20.0 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 20.0 մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1. ֆինանսական միջոցների առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների հայթայթումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2020թ- 2020թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մշակույթի կենտրոնի շենքը գտնվում է անմխիթար վիճակում, չունի ոչ մի հարմարություն: Կենտրոնը գործելու համար անհրաժեշտ է կատարել 110 մ շինության վերանորոգման աշխատանքներ: Մշակույթի կենտրոնի շենքի վերանորոգման արդյունքում կբարելավվի ողջ բնակչության մշակութային կյանքը և երիտասարդների համար կգործի տարբեր խմբակներ: Ծրագրի ֆինանսավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, հնարավոր չէ իրականացնել կամ կատարել համայնքի բյուջեի միջոցների հաշվին, նախատեսվում է ֆինանսավորման համար դիմել կառավարությանը, կամ դիմել դոնոր կազմակերպություններին և բարեգործներին: Համայնքի կողմից ներդրումը կիրանակացվի բնակիչների ուժերով:						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N5

### « Բ Ա Ջ Մ Ա Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն Շ Ե Ն Ք Ե Ր Ի Տ Ա Ն Ի Ք Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ն Ո Ր Ո Գ Ո Ւ Մ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների պահպանություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Վերանորոգված բազմաբնակարանային շենքերի տանիքներ ունենալ						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Վերանորոգված բնակարանների տանիքներ	0	0	0	0	0	2	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Շենքի վերանորոգման նախագիծ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	ձեռք բերված Նախագիծ		0	0	0	0	2
	2. Վերանորոգված շենքի տանիքներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Տանիքների վերանորոգում	0	0	0	0	0	2	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 նախագծի պատվիրում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 անհրաժեշտ նյութերի ձեռք բերում 2.2 շենքի տանիքների վերանորոգում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝25.0 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 25.0մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցների առկայություն 2,Նախագծի առկայությունը						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների հայթայթում, և բնական աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Թիվ 125շենք-63 բնակիչ, թիվ 38 շենք-42 բնակիչ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ- 2021թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի թիվ 125 և 38 բազմաբնակարան շենքերի տանիքները գտնվում են անմխիթար վիճակում, անհրաժեշտ է կատարել տանիքների վերանորոգման կապիտալ աշխատանքներ Ծրագրի ֆինանսավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները որը հնարավոր չէ իրականացնել կամ կատարել համայնքի բյուջեի միջոցներով նախատեսվում է դիմել կառավարությանը, կամ դիմել դոնոր կազմակերպություններին և բարեգործներին: Համայնքի կողմից ներդրումը կիրանակացվի բնակիչների կողմից:						

